

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Կիրակի, օգոստոսի 6-ին, ջերեկվայ ժամի 12-ին, Կոջօրի հայոց եկեղեցում կատարվելու է հոգեհանգիստ Մոսկվայում վախճանված հրապարակախօս

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾԵԱՆԻ

յիշատակին, որի մասին յայտնվում է ի տեղեկութիւն Կոջօրի հասարակութեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարող է արեւօք չը հաստատուի.— ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Նամակ Խմբագրու-
թեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լու-
րեր.— ՀԵՌԱՆԳԻՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրու-
թիւն.

ԿԱՐՈՂ Է ԱՐԴԵՐ ԶԸ ՀԱՍՏԱՏԵՒ

Երբ որ ընտրութիւնները կատարվել են
կանոնաւոր կերպով, տեղի չեն ունեցել ոչ
մի զեղծում և ոչ մի պանդուխտութիւն, կա-
րելի է արդեօք չը հաստատել ընտրված-
ներին առանց որ և է հիմքի, հէնց այն
պատճառով, որ դրանք հաճելի անձինք
չեն հաստատող իշխանութեան համար:

Անկասկած ու:
Սակայն իրականութեան մէջ մենք ու-
նենք փաստեր, երբ ընտրված անձը չէ
հաստատվում առանց հիմնաւոր և էական
պատճառի: Իսկ սպառնալիքներ, որ այս
կամ այն ընտրութիւնը կը բեկնվի, մենք
լսում ենք ամեն մի ընտրութեան ժամա-
նակ: Ընտրողները մշտական տարակուսան-
քի մէջ են և հաւատացած չեն, որ նրանց
կանոնաւոր ընտրութիւնը կը պահպանի
իր օրինական ոյժը: Շատ անգամ մենք
լսում ենք մի այսպիսի առարկութիւն,
որ եթէ մի իշխանութեան վերապահված
է հաստատելու իրաւունքը, այդ իշխանու-
թիւնը կարող է և հաստատել և չը հա-

տատել ընտրութիւնները: Մի քանիսն ա-
ւելի առաջ են գնում և կամայական բե-
կանումները համար առաջ են բերում հե-
տեւեայ հիմունքը: Նրանք ասում են, որ
եթէ մի իշխանութիւն պէտք է հաստա-
տել ընտրվածներին, նա մի տեսակ պա-
տասխանատուութիւն է կրում այն գործի
արդուութեան վերաբերութեամբ, որի հա-
մար կատարվել են ընտրութիւններ, իսկ
այդ պատասխանատուութիւնը բնականա-
բար առաջ է գալիս պարտաւորութիւն աւե-
լի միջամտելու, աւելի ներգործական մաս-
նակցութիւն ունենալու և ուրեմն ընտր-
վածների արժանաւորութեան մասին երաշ-
խաւոր լինելու:

Դա սխալ և վտանգաւոր տեսակէտ է:
Ամեն մի ընտրութիւն պէտք է ունենայ
իր որոշ կանոնները և ընտրութիւնների
բեկանման դէպքերը պէտք է որոշակի հա-
տաւորութեամբ լինեն, որպէս զի ընտրողական
գործը չը դառնայ կամայականութեան
արդիւնք և չը կորցնի իր նշանակութիւնը:
Այդ տեսակէտից շատ ուսանելի է կա-
ռավարական անտառի հեղինակաւոր կար-
ծիքը մի դէպքի առթիւ, երբ կանոնա-
ւոր ընտրութիւնը բեկնված էր առանց
հիմնաւոր պատճառի: Նիժնեգորսեան նա-
հանգի գիւղական մի համայնք ընտրում
է գիւղական երկու պատգամաւոր իրանց
հասարակական գործերի համար: Չեմսկի
գիւղաւորը, որին վերապահված է ընտր-
վածները հաստատութիւնը, չը հաւանե-
լով ընտրվածներին, չէ հաստատում նրանց

և առաջարկում է նոր ընտրութիւն:
Գործը հաւաք սենատին, որը և վերականգ-
նեց գիւղական ընտրութիւնը: Սենատը
բացարձեց, որ հասարակութիւնը ինքը
աւելի լաւ դատաւոր է իր ընտրեալների
վերաբերութեամբ և որ նրա ազատ կար-
ծիքը խախտել նշանակում է խախտել ընա-
րդական սկզբունքը, այդ պատճառով
ընտրութիւնները հաստատող իշխանու-
թիւնը չէ կարող բեկնել նրանց իր սե-
փական հայեացքների և ճշգրիտ թերադ-
րութեամբ, այլ միայն օրէնքի ցոյց տուած
զեղծումների ժամանակ:

Այդ արդարացի և ուղիղ տեսակէտը
պէտք է իւրացվի և մեր եկեղեցական և
ուրիշ ընտրութիւնների ժամանակ: Այլա-
պէս ընտրական սկզբունքը ոտնակոխ ե-
րաւոր չէ լինի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԱՆՔՆԵՐ

VI

Երեւանի թեմական դպրոցի վարչութիւնը
բաւական ժամանակ է, որ յայտարարութիւն
է տակ, թէ այդ դպրոցի համար պէտք են
տեսուչ և ուսուցիչներ, և դեռ ոչ մի համա-
լսարանական խնդրեք չէ տուել, ինչպէս այդ
երեւում է նոյն դպրոցի տեսչի պաշտօնակա-
տար պ. Ս. Տէր-Գաբրիէլեանցի նամակից, որ
տպված է «Մշակ» ներկայ համարում:

Համալսարանականներն պրաւելու համար
դպրոցի վարչութիւնը աւելացնում է նրանց
դասադէրը 40 ռուբլուց 50-ի:

Արդեօք կօգնէ այդ:
Դժուար թէ օգնէ: Կը լինեն դուք խնդրեք
ստուգներ, բայց այդ՝ կամ գոյութեան կու-
փոթորիկի փաշտպան մարդաբեկորներ կը
լինեն, կամ նոր կեանք մտնող երիտասարդ-
ներ, որոնք կը համաձայնեն ժամանակաւորա-
պէս տանել հայ ուսուցչի խաչը զոյնը անօր-
նութիւնը ճակատագրի:

Բայց դրանով վերջ չի լաւանալ: Մեծ բան
չի լինի, եթէ այդ խնդրատուների մէջ նոյն
խաղ զանգի մի արժանաւոր անձնաւորութիւն,
որ, թերեւ իր կարիէրայի վրա, գնայ ծա-
ռայելու երեւանի դպրոցում: ОДИНЪ ВЪ ПОЛѢ
НО ВОИНЪ!

Երեւանի դպրոցը, ինչպէս առհասարակ մեր
կրթական ընտր արդեան գոմերը, ժաբերելու հա-
մար անհրաժեշտ է մի ամբողջ հոսանք լուրջ, և-
ռանգուն, գաղափարական համալսարանական-
ների: Առաջ կը գնայ արդեօք այդպիսի մի հո-
սանք չնորհիւ այն հանգամանքի, որ դպրոցի
վարչութիւնը տարեկան 800—1000 ռուբլու
փոխանակ 1000—1200 ռ. է առաջարկում հա-
մալսարանականին, որ կեանքի միւս ասպա-
րէզներում կարող է ամենաքիչը դրա կրկնա-
կէն ստանալ:

Այդ հարցը դնել մի և նոյնն է թէ վճար
Բայց այդպիսի հոսանք չի առաջանայ, եթէ
նոյն խաղ կրկնապատկեն ոտնկոկները, որովհե-
տեւ ճշդ միայն ոտնկոկ կեցցէ մարդը:

Երեւանայեցէ մի գաղափարական համա-
լսարանական մի Տիրայր կամ Բենիկ վարդա-
պետի իշխանութեան տակ, և շատ բան կը
պարզվի ձեզ համար:

Եթէ այդ բաւական չէ, յիշեցէ անցյալի
փաստերը, որոնք մի-մի էջեր են հայ համալ-
սարանական մանկավարժի երկար նահատակա-
գրութեան:

Թերթները այդ էջերը վերջից: Այդտեղ ար-
ձանագրված է մի վրդովեցուցիչ փաստ, որ
սկսական արատ կը մնայ Ներսիսեան դպրոցի
պատմութեան մէջ:

1898 թւին Ղըրբի հիւանդութիւն է ստա-
նում Ներսիսեան դպրոցի և Թիֆլիսի արհես-
տագիտական ուսումնարանի ուսուցիչ Ա. Ալ-
լահվերդեան: Արհեստագիտական ուսումնարանի
վարչութեան միջնորդութեամբ՝ Թիֆլիսի դու-
ման միանուագ օժանդակութիւն է տալիս պ.
Ալլահվերդեանին, որպէս զի գնայ Եւրոպա
բժշկվելու: Պ. Ալլահվերդեան արձակուրդ է
ստանում և գնում Անցնում են ամիսներ,
նստում է հետեւեալ ուսումնական տարվայ

Հայոց պատմութեան մէջ հազիւ թէ կարելի
լինի գտնել շատ այնպիսի անկիւններ, ուր չե-
րեւար մասնիչ հայի գարշիկը դէմքը: Ոչ մի
տեսակ դիրք, պարագայում չէ կարողացել յետ
կանգնեցնել հային այդ սեւ պաշտօնից, մատ-
նիչ է եղել հայ իշխանը, հայ քահանան, հայ
կաթողիկոսը, վաճառականը, գեղջուկը, կարելի
պիտի լինէր սպասել, որ հայերի մէջ սկսված
ուղարկական գործը գոնէ ազատ կը լինի հայի
այդ յատկութիւնից, մանաւանդ որ նա հայ-
րենի հողի վրա չէր հաստատված, այլ զիջե-
րում էր Եւրոպայի զանազան կողմերում: Բայց
հայ մասնիչի համար չը կան աշխարհագրական
սահմաններ, նա ամեն տեղ է, մանաւանդ այն-
պիսի տեղ, ուր կան իր ազգակիցներից գոնէ
մի քանիսը: Ոսկանի տպագրական ընտանիքի
մէջ էլ շուտ գոյացաւ մի այդպիսի տեղից ցեղ:
Դա քահանայ Համազասպանն էր:

Այս մարդը, ինչպէս յատուկ է բոլոր մատ-
նիչներին, կարողացաւ գրաւել Ոսկանի առան-
ձին վստահութիւնը, ընկերացաւ նրան, կատա-
րում էր զանազան յանձնարարութիւններ
ինչպէս գիտնեք, Լիվօրնօի երեք ջուղայիցի
վաճառականներ յանձն էին տուել Աստուածա-
յունչի տպագրութեան ծախսերը: Ոսկանը Ամ-
ստերդամից ուղարկեց Թագէտ քահանային
Լիվօրնօ՝ այդ վաճառականների հետ հաշիւները
վերջացնելու: Այդ գործի պատմութիւնը դրել
է ինքը, Համազասպանը, աշխատելով, ի հար-
կէ, արդարացի կը լինի և մեղադրել վաճառա-
կաններին, որոնք, որպէս թէ, առանց որ և է
պատճառի հրաժարվեցին իրանց խոստումը
կատարելուց և բացի դրանից՝ յափշտակեցին
Ոսկանի ուղարկած բոլոր գրքերը, թէ այդպէս
չէ եղել գործը, երեւում է նրանից, որ Թա-
գէտը գիտէր և դատարանին, բայց փոխանակ
վաճառականներին պատմելու՝ ինքը դատա-
պարտվել է բանտարկութեան: Բանտից նա ա-
զատվեց պապի նուիրակի միջնորդութեամբ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

VIII

Մի խոշոր գործի յարատեւութեան համար
բաւական չէ, որ նրան ձեռնարկողը ունենայ
կրկնթէ կամք ու յամառ տոկոսնութիւն: Հար-
կաւոր են և նիւթական միջոցներ: Տպարանը
բազմապատկ ծախսեր պահանջող հիմնարկու-
թիւն է. միշտ չեն կարող գտնվել բարերար-
ներ, որոնք յանձն առնէին այդ ծախսերը տալ,
ուստի տպարանը փոքր ի շատէ ապահով դրու-
թեան մէջ կարող է լինել միայն այն ժամա-
նակ, երբ նրա հետ միասին զարգանում է գրա-
վաճառութիւնը: Բայց հայերի մէջ առեւտրի
այդ նոր տեսակը համարեա յայտնի չէր: Գիտա-
ւոր աստղերի պէս երեւացող և յանկարծ ան-
լուանք էին այն գլխաւոր պատճառի, որ գրա-
վաճառութիւնը նրանց աշխիցը չէր. տպա-
գրիչները հրատարակիչներ էլ էին, նրանք գրքեր
էին լոյս հանում և ոչինչ չէին ստանում այդ
հրատարակութիւններից. ուստի մնում էր կամ
բարերարի դիմել ու մի կարծ գործունէութիւն
ցոյց տալ կամ խրվել պարտքերի մէջ ու ան-
յայտանալ:

Ոսկանը հասկացել էր այս հանգամանքը և
աշխատում էր կազմակերպել գրավաճառու-
թիւնը: Մեծ անյարմարութիւն էր այն, որ նրա
տպարանը գտնվում էր Եւրոպայի մի անկիւ-
նում, հայութիւնից շատ հեռու: Այդ պատճա-
ռով նա դեռ 1865-ին միտք ունէր փոխադրել
ուղարկել Լիվօ ջաղաքը, որ Հոլանդիային ա-
մենից շատ մօտիկ հայկական խոշոր գաղթա-
կանութիւնն ունէր իր մէջ և կարող էր, Լի-

հատանի միւս հայաբնակ տեղերի հետ միա-
պին, աշխույժ գործին: Ոսկանը նամակով յայտ-
նեց Նիկոլին այդ միտքը: Հ. Ալոյիստի Պի-
գու, պատմելով այս եղելութիւնը, շատ ի-
րաւացի կերպով նկատում է թէ Ոսկանը, ե-
րբ, չը գիտէր որ Գալանուքը, ինքը, Պիգու
գտնվում են Լեհաստանում: Եւ իրաւ, ե-
թէ Ոսկանը իմանար այդ, աւելուած աւելորդ
կը համարէր դիմել անել լեհահայերին: Ամա-
տերդամի տպարանը, ինչպէս գիտնեք, ահագին
անհանգստութիւն էր պատճառում ջերմեռանդ
պատերազմին: Նրանք շատ ուրախացան Ոս-
կանի առաջարկութեան վրա, իսկոյն հասկա-
նալով որ տպարանը Լիվօ փոխադրելով կարե-
ւի էր խափանել «չառ չարիքների առթիւ»,
այսինքն՝ այլ ևս չէին տպվի այնպիսի գրքեր,
որոնց մէջ, օրինակ, ամփած լինի թէ ս. Հոգին
ըլլում է միայն Հօրից և ոչ թէ Հօրից ու
Որդուց կամ թէ, օրինակ, Գրիգոր Տաթեւացին
սուրբ կոչված լինի Նիկիոյ Պիգուի խորհրդով
մի «չառ հանձնարուք» նամակով համոզեց Ոս-
կանին կատարել իր այդ միտքը: Բայց Ոսկանը
ծուղվելի մէջ չնկատ և, իմանալով որ Լիվօ-
վում իր տպարանը պիտի դնէ Պիգուների հրա-
մանադրութեան տակ, աւելի լաւ համարեց
մնալ Ամստերդամում և լինել ազատ, թէեւ
նիւթապէս շատ անապահով դրութեան մէջ:

Նա յոյս ունէր թէ տպագրված գրքերի վա-
ճառումից կը ստացվի բաւականաչափ դրամ՝
գործը շարունակելու համար: Բայց իրուր
Մի նաւ, որ Կ. Պոլսի էր տանում բազմաթիւ
ատուածաշունչներ և շարականներ, ընկղմվեց,
մեծ վնաս պատճառելով Ամստերդամի տպա-
րանին, բացի դրանից, տեղ հասած գրքերն էլ
շատ դանդաղ և անկանոն էին վաճառվում:
Պարտքերը զեղվում էին պարտքերի վրա, և
Ոսկանը ստիպված էր թէ իր ծանր գործը տա-
նել և թէ պարտաւորների ձեռքին տանվել:
(*) Տե՛ս միւթիւնը. Կ. 45.

սկիզբը. պ. Ալանկերդան դիմում է երկու զարդաների վարչութեան, խնդրելով որ մի քանի ամիս էլ սպասեն, մինչև ինքը բժշկվի: Արհեստագիտական ուսումնարանի վարչութիւնը համաձայնում է, բայց մեր ազգային զարդանի վարչութիւնը արձակում է նրան պաշտօնից, չը նայելով որ 11 տարի այնտեղ ծառայել է պ. Ալանկերդան եւ որ, բժշկիչների ասելով, հէնց այդ ուսուցչական ծանր ծառայութիւնն էր բայցայել նրա չղբը:

Ինչքեր կրեցին Շուշու զարդանում Լեւոն Սարգսեան, Լեւոն Մանուէլեան, Ա. Բարխուդարեան եւ Յ. Գրիգորեան, — յայտնի է ամենքին: Յայտնի է նոյնպէս, որ պ. Լ. Սարգսեան այնուհետեւ չը հաստատուէր Ներսիսեան զարդան տեսուչ եւ ստիպված եղաւ հեռանալ Մոսկվա:

Աւելի լաւ ընդունելութիւն չը գտան մեր զարդաների տէրերի կողմից եւ Յ. Սպենդիարեան ու Յ. Սաղաթելեան:

Աւելացրէք դրանց վրա մի քանի ուրիշ փաստեր, որոնք լուսարանում են մեր զարդանային իշխանութեան վերաբերմունքը դէպի համալսարանականները:

«Համառոտ պատմութիւն Ներսիսեան հոգեւոր զարդան» գրքում, 147—148 երեսներում, սեւ տառերով սպիտակ թղթի վրա տպված է, որ 1873 թիւին այդ զարդան հոգաբարձութիւնը տեսուչ է ընտրել Անդրէաս Արծրունուն, բայց թեմական առաջնորդ Մարկար եպիսկոպոսը (յետոյ կաթողիկոս) փոխել է տուել այդ վճիռը, որովհետեւ թէեւ «Անդրէաս Արծրունի բոտ ուսման եւ բարոյականութեան արժանաւոր անձն է, սակայն ինքն չը կարէ համաձայնել առ ընտրութիւն նորա ըստ յայտնի ինքեան պատճառանալով»:

Հանգուցեալ Անդրէաս Արծրունին վերջին տարիներս դառնութեամբ էր յիշում այդ դէպքը:

Նոյն Անդրէաս Արծրունին, երբ արդէն յայտնի պրոֆէսոր էր, — այն ժամանակ, երբ այժմեան Կաթողիկոսը նոր հաստատված եկել էր Թիֆլիս, — պատրաստականութիւն յայտնեց ծառայել Էջմիածնի ձեռնարկում, «եթէ ձեռնարկի ղեկը գտնվի այնպիսի լուսաւորված հոգեւորականի ձեռքին, ինչպէս Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանն է», բայց իսկոյն խօսքը կտուրը գցվեց:

«Ազգայնոց բարբառ» գրքի հեղինակ յայտնի լեզուագէտ Սարգիս Սարգսեանին, որ յետոյ ուսուցիչ մի գիմնազիայի տեսուչ դարձաւ, Գէորգ Կաթողիկոսը հրաւիրեց ձեռնարան, իբրեւ լատիներէնի եւ յունարէնի ուսուցիչ, բայց երբ նա արդէն ճանապարհին էր, վճիռ փոխվեց, որովհետ չը մտցնել ձեռնարկի ծրագրի մէջ հին լեզուներն եւ, երբ պ. Սարգսեանն հասաւ Էջմիածին, նրան տեսնելու ուրիշ առարկայի դասեր, եթէ յիշողութիւնս ինձ չէխաբում, աշխարհա-

մի հանգամանք է սա, որ ցոյց է տալիս, թէ Համազասպեան արդէն բաւական գնահատելի մարդ էր Կաթողիկ հոգեւորականների համար: Ինչպէս երեւում է, նոյն այդ Թադէոս քահանան էր, որ Լիօվ տարաւ Ամստերդամի հրատարակութիւնները, որոնց մէջ էր եւ Առաքելի պատմագրութիւնը: Այդքան մօտիկ եւ հետադարձ ձեւացող անձնաւորութիւնը անշուշտ մեծ ազդեցութիւն ունեցած պիտի լինի Ոսկանի վրա յուսահատութեան այն ժամանակներում, երբ տպարանի գոյութիւնը իսպառ վտանգված էր երեւում: Չէ կարելի չինթաղել, որ Թադէոսը, իր նախամտածած նպատակների համար կամ գուցէ եւ կաշառված պապականների ուկով ու խոստովանելով, համոզում էր Ոսկանին հանել տպարանը Հոլանդիայից:

Բայց ուր կարելի էր տանել նրան Կաթողիկ հոգեւորականութեան ինտրիգներն ու միջնաշուքները, ինչպէս տեսանք, նեղում էին նրան եւ Հոլանդիայում, արգելքներ յարուցանելով զրգերի տարածման դէմ: Բացի դրանից երեւում է, որ եթէ Ոսկանի հրատարակութիւնները դանդաղ էին վաճառվում, պատճառներից մէկն էլ այն էր, որ նրանք տպագրվում էին մի բողոքական երկրում, իսկ սա, խառար ժամանակի հասկացողութիւնների տեսակէտից, մի հանգամանք էր, որ ապացուցանում էր, թէ այդ զրգերը անհարգաւոր են, ազատված: Այս բոլորը պիտի հասկացնէր Ոսկանին, որ գիշողութիւն անել հարկաւոր է եւ պէտք է գործունէութիւն սկսել մի Կաթողիկ աշխարհուում: Ամբողջ Եւրոպայում նա միայն Ֆրանսիան յարմար համարեց իր մտքի համար, այս իրողութիւնը մի փաստ է, թէ նա աշխատում էր չարիքներից փոքրագոյն ընտրել:

Ֆրանսիան թէեւ Կաթողիկ երկիր էր, թէեւ Հոմի աւագ դուստրի պատուանունն էր կրում, իսկ նրա թագաւորները ամենաքրիստոնէայ տիրողութիւն էին փայլում, բայց ունէր եկեղե-

զրութեան դասեր: — Սարգիս Սարգսեան չուտով թօթափեց իր ոտները փոշին եւ հեռացաւ Մոսկվա:

1896 թիւին Ժոնսկի յայտնի քիմիական զբոսի պրոֆեսորի ասիստէնտ Պօղոս Մելիքեան, Շուշու թեմական զարդան հոգաբարձութիւնից հրաւիրվելով տեսուչ, գալիս է Կոլկաս, բայց Թիֆլիսում իմանում է, որ չէ հաստատվել եւ գնում է Բագու, ուր պաշտօն է գտնում կրկնապատիկ ուժեղով, բայց ոչ իր սիրած ասպարէզում:

Մինչև այժմ մեր յիշած բոլոր համալսարանականները առաջադիմական բանակի մարդիկ են եղել, մի բանակի, որ սիրված չէ մեր ազգային գործերի ղեկավարների կողմից:

Բայց աւելի լաւ չէ եղել վերջինների վերաբերմունքը եւ դէպի պահպանողական կուսակցութեան պատկանող համալսարանականները, եթէ չը հաշուենք նրանցից մի քանի բաղդաւորներին, որոնք կարողացել են հողմացոյցի նման յարմարվել բոլոր հովերին եւ զարմանալի ընդունակութիւն են ունեցել միշտ մի որ եւ է սեւ փէշի տակ ապաստան գտնելու:

Բաւական է առաջ բերել միայն պ. Սեդր Մանգինեանի օրինակը, որ, տանեակ տարիներ իր բոլոր ոյժերը հայ զարդանի նախնիների, ստիպված եղաւ վերջը բարձրակ ձախող մի առեւտրական տան գործակատար դառնալ:

Այս բոլոր փաստերից յետոյ պարզ է, թէ ինչու մեր համալսարանականները խնդիրք չեն ուղարկում մեր թեմական զարդանների անտրուկութեան, եւ արդեօք ձեր մէջ ցանկութիւն չէ ծագում, չը նայելով այդ երեւոյթի վերին աստիճանի ցուալի լինելուն, դառնալով դէպի այն մարմինը, որի ձեռքին է գտնվում մեր զարդաների ղեկը եւ ասել. «Vous l'avez voulu, George Dandin, vous l'avez voulu!»

S. Յ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւան, յուլիսի 27-ին
Խնդրեմ բարեհաճէք երկուց զրութեանս մի անկիւն շնորհել «Մշակ» մէջ ի տեղեկութիւն Երեւանի թեմական զարդանում ուսուցչական պաշտօն ցանկացողներին:

Երեւանի հայոց թեմական հոգեւոր զարդանի յարգելի հոգաբարձութիւնը իր ամսին 26-ին գումարած ժողովում, աչքի անցնելով ուսուցչական պաշտօն ցանկացողներին խնդիրները, տեսաւ որ զարդանի բարձր դասարաններում աւանդելիք մաթեմատիկական, բնագիտական աստիճանների եւ ուսուցչ լեզուի համար համալսարանականութեան չէ մի ինչոյն չը կայ, որի պատճառը դասագին ասիստենտները համարելով:

Հոգաբարձութիւնը, կամենալով անշուշտ բարձր կրթութիւն ունեցող ուսուցիչներ ունենալ զարդանի բարձր դասարաններում, որո-

ցական ինքնավարութիւն, որ յայտնի է գալիս կանտիլեան անունով: Դա չէր նշանակում ոչ անկախութիւն, ոչ էլ ընդդիմադիր մի հոսանք: Հոմի դէմ միանալիս եկեղեցին, դաւանական հարցերի մէջ ընդունելով իր կախումը Հոմից, վարչական ինքնօրէնութիւն էր պահպանում: Գալիլեական եկեղեցու գլխաւոր սկզբունքներն էին. 1) պապը ոչինչ իրաւունքներ չունի աշխարհական գործերի մէջ միանալու: 2) կրօնական հարցերի մէջ նրա կարգադրութիւնները չը պիտի հակասէին այն եկեղեցական ժողովների որոշումներին, որոնց ընդունում էր ֆրանսիական եկեղեցին: Ոսկանի ժամանակ Ֆրանսիայի թագաւորն էր Լուդովիկոս XIV: Յայտնի է, որ այս թագաւորը ծայրայեղ զարգացման հասցրեց բռնապետութիւնը, բարձրացրեց իր անձնաւորութիւնը այն աստիճան, որ նրան համարում էին Աստուծո միջնորդը: Այս աշխարհի վրա, Աստուծո միջնորդը այս աշխարհի վրա, Աստուծո տեղապահ է նոյն իսկ Աստուծո: Կենդանի պատկերն էր Դիոնիսիոսի, որ արքայազնի պատկերն էր Դիոնիսիոսի: Ֆրանսիայի այդ կէս-աստուածը, որ երկրպագութիւն էր ընդունում իր հպատակներից, աւելի եւս զարգացրեց գալիլեանութիւնը, պապին նա հարկադրեց ձախել իր գերազանցութիւնը, եկեղեցականներին հեռացրելով պետական բարձր պաշտօններից: Կառնածով էր վերաբերվում նրանց, որովհետեւ եկեղեցական զգեստները եւ սրբազան պարտաւորութիւնները կրօնական հեղինակութիւն էին տալիս նրանց: Մի եւ նոյն ժամանակ Լուդովիկոս XIV Արեւելքում հեռացնում էր մի միւրը եւ հաշտեցնող քաղաքականութիւն: Պարտը համարելով, իբրեւ Կաթողիկ թագաւոր, հովանաւորել Թիւրքիայում գործող քարոզիչներին, նա մի եւ նոյն ժամանակ խորհուրդ էր տալիս աշխատել զգուշութեամբ, աւելորդ եռանդ ցոյց չը տալ եւ այն-

*) Лавиъ в Рамбо—«Всеобщая Исторія». հատ. VI, М. 1899, էր. 154.

չեց համալսարանականների դասագինը դարձնել փոխանակ քառասունական բուլլու: յիշանալան, անպէս որ իր նախկին որոշման համաձայն համալսարանական, ունենալով չարաթական 20—24 դաս, իրան բաւականաչափ վարձատրված պիտի համարէ զարդանի սուղ միջոցներից: Ուսուցչական էր, որ վերջին չափ առարկաներն աւանդել ցանկացողները վաղօրօք խնդրամատոյց լինէին հոգաբարձութեանը:

Տեսչի պաշտօնակատար՝

Ս. Տէր-Գարրիէլեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 24-ին
«Մշակ» լրագրի 129 համարի ներքին լուրերի բաժնում գտնվում է Ախալքալաքից, իմ հասցէիս ուղղված, մի սուտ լուր, որի մէջ պ. լրատուի ցանկացել էր միմիայն իմ բարի եւ մաքուր անունն արատաւորելու: Ուստի, հիմնվելով գրաքննական եւ տպագրական 139 յօդուածի հիման վրա, խոնարհաբար խնդրում եմ անկիւն մի շնորհէք «Մշակ» լրագրի մերձապի համարներից մէկում՝ գտնեղելու իմ այս հերքումն:

1899 թիւ «Մշակ» լրագրի 49 համարում, Ախալքալաքի պ. թղթակիցը խուլ անկիւնից քարեր է նետել իմ հասցէիս, առանց յիշելու իմ ազգ եւ անունս, եւ «վախառու» էր անուանել ինձ Ջիգրաշէնի գիւղացիների պատճառով, բայց «Մշակ» լրագրի յուլիսի 13-ի 129 համարի մէջ յիշել էր «վախառու» ազգ եւ անունը, Յակովբ Մարգարօւի Պ. թղթակիցը խեղճութիւնը է իսկութիւնը եւ մինչև անգամ լուրերն է տուել ներկայ տարվայ յուլիսի 4-ի իմ արդարացումն վախառութեան գործի մէջ: Արդարաւորով, ի հարկի, ես չէի բաւականաչափ, որ Շահնազարեանը մեղադրէր ինձ վախառութեան մէջ, իմ թշնամիներս զրգմամբ, ուստի նրա այդ անարեւելիքն եւ անարդարութիւնը եւս արձանագրելու տուի, որի դէմ սկսել եմ իմ բողոքն ուր հարկն է իսկ ամսին 5-ին քննվող գործը պ. Դարբինեանի հետ այն էր, որ ես զրպարտել էի նրան, համարելով Շահնազարեանին զրգող իմ դէմ, վերջապա նրանով, որ ինձ դատարանը երաշխաւորութեամբ թողեց, չը նայած որ դատարանի այդ որոշումն անօրինական էր:

Այժմ պատմած գործի իսկական պատկերը, որը այդքան թիւրիմացութիւնների պատճառ է դառնում, եւ, 1891 թիւին գնեցի պ. Շահնազարեանից 50 բուլլու գործն եւ գործի 6 ամսվայ ժամանակամիջոցում չը կարողացայ լրացնել 50 բուլլու գործն եւ գործին, այն ժամանակ պ. Շահնազարեանն պարտաւոր է տալ ինձ 50 բուլլու գործն եւ նաեւ գնած գործին ու գարին Անցաւ պայմանաւորում, պ. Շահնազարեանը անկարող եղաւ յանձնելու ինձ գործը ու գարին եւ մանաւանդ կանխիկ տուածս փողը—50 բուլլու: Հեռուապէս, նա պայմանագրանք գնալից, եւ ամբողջ 4 տարի անցնելուց յետոյ 1895 թիւին այդ պայմանով ստացած 50 բուլլու փողը մութհակը մակագրեց. նուիրելից

պիսի ձեռնարկութիւններ չը սկսել, որոնք կարող են խուլութիւններ յարուցանել, կրքեր չարմել **):

Այս այսպիսի հանգամանքներ արտաքուստ դուրսէն էին դարձնում Ֆրանսիան 1669 թիւ Կալանիին Ոսկանը մի աղերսագիր հետ ուղարկում է Լուդովիկոսին իր տպագրած Աստուածաշուքն: Թագաւորը ընդունում է այդ նուէրը իրան յատուկ սիրայիք քաղաքավարութեամբ եւ Ոսկանը, խրախուսված այդ բարձր ուշադրութիւնից, շտապում է Պարիզ, ուր խնդրում է իրաւունք՝ հայ տպարան բաց անելու Մարսելում կամ Լիօնում եւ կամ թէ Ֆրանսիայի մի ուրիշ քաղաքում: Այստեղ հայ վարդապետը համոզվում է, որ ամենաքրիստոնէայ թագաւորի երկրում չը կայ ազատութիւն այն չափով, ինչպէս կարելի էր սպասել թողութիւն իրան նրան տուին, բայց այն պայմանով, որ տպարանից լոյս տեսնող զրգերը հոմիական ուղղութիւն կրօնի եւ հաւատալիքներին հակառակ բան չը պարունակեն: Այս պայմանը երկայնի սուր էր. նրան կարելի էր հակառակ այնպէս, թէ հոմիական եկեղեցու դէմ ուղղած գրութեան չը պէտք է տպագրել, կարելի էր հակառակ եւ այն մաքուր թէ հայոց կրօնական գրքերը պէտք է սրբագրել այնպէս, որ նրանց մէջ կաթողիկ եկեղեցու ընդունած ձեւերին հակառակ բան չը լինի. չէ որ Հոմի նշանաբանն էր—«ամ ինձ հետ չէ, նա ինձ հակառակ է»: Թողութիւնը հէնց այդ երկրորդ մտքով էլ հասկացվեց. Ոսկանը ընդունեց պայմանը, երեւի, յոյս ունենալով, որ այդ սահմանների մէջ էլ կարելի է գործ տեսնել:

Դուրս գալով Հոլանդիայից, նրա տպարանը, հէնց որ մտաւ Կաթողիկ աշխարհը, եւթարկվեց Պրոպագանդայի իշխանութեան: Ոսկանը ընտ-

**) Թօրէն—«Երկաթէ գիմակով մարդը», Կ. Պօլիս, 1870, էր. 37.

նոյն գիւղի պ. Յարութիւն Կորեկեանին եւ ասացի, որ միմիայն 30 բուլլու պահանջէ, նրա անկարող լինելու պատճառով:

Ինչպիսիպէս դատարանն էլ այդպէս էլ վրձնել էր եւ տուել էր 30 բուլլու կատարողական թերթ, որը մինչև այսօր դեռ անվճար է մնացել իսկ 1/2 եւ տուածն էս երբեք ստացած չեմ, դեռ կորցրել եմ 20 բուլլու տուած դրամապիսից: Ես երբեք, իմ կեանքումս վախառական գործի մէջ մեղադրված չեմ եղել, դատարանն աչքի առաջ ունենալով իմ անմեղութիւնն՝ ինձ արդարացրեց:

Յակովբ Մարգարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Կոլկասեան ցուցահանդէսի համար դիտաւորութիւն կայ յարմարեցնել Արեւսանդրեան ալդին իր չըջակայ մի քանի լինութիւնների հետ միասին, Կոլկասեան փութանտեսական ընկերութեան ներկայացուցիչները Թիֆլիսի քաղաքային ուղարակել անգամների հետ միասին, երէկ, օգոստոսի 4-ին, մանրամասն քննեցին Արեւսանդրեան ալդին եւ եկան այն եզրակացութեան, որ կարելի է նրան յարմարեցնել ցուցահանդէսի համար: Արեւսանդրեան ալդին, լինելով քաղաքի կենտրոնում, կը գրաւի այցելուների մեծ լազմութիւն եւ չի պահանջի այնքան ծախք, որքան կը խլի քաղաքի ծայրերից մէկում շինված ցուցահանդէսը:

Շատ նպաստաւոր սպասութիւն թողեց Նատախտարի կողմէ անդի ազր իւր ներքինութիւնը, որ կատարեց մի յատուկ յանձնաժողով հինգշաբթի, օգոստոսի 3-ին: Յանձնաժողովին մասնակցում էին քաղաքային ուղարակի անգամները, բժիշկներ, քիմիկոս, բակտերիոլոգ, մի քանի ձայնաւորներ, օգրեւելութեան, ֆինանսների, ֆինանսների միւնիստրութեան ներկայացուցիչ Սուլտան-Կրիմ-Գրիբէյ, զիւղատեսութեան տեսուչ Գէկեկիսի եւ ուրիշներ: Յանձնաժողովը կրկնվեցով ճանապարհվեց Մցիսիթ, իսկ այնտեղից կառքերով վարդիակվալի ճանապարհով մօտ 7 վերստ մինչև Նաթախտարի կողմէ տեղը: Ջուրը բղկում է գետնի տակից աղբիւրների ձեւով, որոնց թիւը շատ մեծ է. իսկ առ այժմ բացված է մօտ քսանը: Ջուրը մաքուր է եւ սառը: Բակտերիոլոգիական հետազոտութիւնը ցոյց տուեց, որ ջրի մէջ չը կան ախտաբեր բակտերիաներ, իսկ եղանակներ անվտանգ են եւ այն էլ սակաւաթիւ: Մի խորանարդ ամառիմետը ջրի մէջ անվտանգ բակտերիաների կամ սպիւրօֆիտների քանակութիւնը չէ համեմատ 150-ի, իսկ երբեմն բոլորովին չնչին է, մինչդեռ գիտութեան մէջ ընդունված չափի համաձայն նոյն իսկ 150 սպիւրօֆիտը ապացոյց է ջրի լաւ յատ-

րկ էր Մարտէլ քաղաքը. բայց նախ քան այդտեղ գնալը, տպարանը բաց է անում Լիօնի քաղաքում, ուր եւ 1870-ին տպագրվում են երկու հատ յայերէն կրօնական գրքեր, երկուսն էլ զուտ Կաթողիկական, «Պարտեզ հոգեւոր» եւ «Բրիտոնեական» վերնագրով: Այնուհետեւ Ոսկանի տպարանը դատապարտվում է անսովոր անգործութեան մինչև 1873 թը: Եւսկանը: Դա Ոսկանի յուսահատութեան, տատանումների եւ ծանր հոգեբեր ժամանակն էր: Մերոնի վարդապետը *) մի կողմից անհանգիստ էր Լուդովիկոս XIV-ի կատալիստիկական դրած պայմանի պատճառով, բայց յուսահատութիւնից միանգամայն խափանել էջմիածնի տպարանը չէր կարողանում, այնքան նըււրված էր այդ գործին: Վերջը, վստահանալով կատալիստիկական խոստումների անկեղծութեան վրա, բայց արաւ տպարանի դռները դարձեալ էջմիածնի եւ ս. Սարգսի անունով: Միւս կողմից նրան տանջում էր դրամական հարցը, որ հարկադրեց նրան ի վերջոյ ընկերայնել իր հետ Թադէոս Համազասպեանին: Ընկերակցութեան պայմանագիրը կնքվեց այդ երկուսի մէջ 1873-ին: Ինչպէս երեւում է, Ոսկանը այդ ժամանակ այնքան հասկացել էր թէ ինչ մարդ է այդ քահանան, որ հարկաւոր համարեց մի քանի զգուշութիւններ գործ դընել: Ամենակարեւորը այն էր, որ Ոսկանը միայն իրան վերապահեց տպագրելի գրքերի սրբագրութիւնը: Ընկերութիւնը այսպէս էր կազմվում: Ոսկանը եւ Թադէոսը հաջորդական զանկան գումար էին գնում ծախսերի համար: տպագրված գրքերից 350 օրինակ վերցնում էր Ոսկանը իբրեւ սրբագրութեան վարձ, իսկ մնացածը հաւասար չափով բաժանվում էր երկուսի մէջ:

(Վր շարունակվի)

*) Կատեղեցի որ Ոսկանը արքեպիսկոպոս էր, բայց անտեսում էր իրան վարդապետ արքեպիսկոպոս:

կույրներն էլ անտարաքարի աղբիւրներն առաւ-
տուրները զարմանալի է։ Մի երկու վերստ
տարածութեան վրա հողի տակից բլրաւոր ջրե-
րից կազմուած են ձեր առաջ գետեր, որոնք
կարող են տալ օրեկան 10—15 միլիոն վերջո-
ջուր։ Քաղաքը հեղուկութեամբ կարող է աղ-
բիւրների տակիցից մաքուր ջուր հանել 4—5
միլիոն վերջո։ Ջուրը համեղ է եւ ունի 12—13°
տաքութիւն։ Քաղաքը բերելը շատ հեշտ է,
որովհետեւ այդ աղբիւրները գտնվում են քա-
ղաքից շատ բարձր եւ ջուրը կարող է հոսել
յատուկ ջրուղիներով։ Վերջնական որոշում կա-
տարելու համար անհրաժեշտ է մի քանի ամիս
եւս շարունակել ջրի քիմիական եւ բակտերի-
ոլոգիական հետազոտութիւնը։

Հինգշաբթի, օգոստոսի 3-ին, Անդրկովկա-
սեան երկաթուղու թիֆլիսի կայարանի գլխաւոր
արհեստանոցներում, զէպոյում, կայարանի
դահլիճներում եւ Նախաժողովի կողմէ թաղում
կայքում էր երկաթուղու գլխաւոր կառավարչի
հրամանը, որով գլխաւոր արհեստանոցների եւ
զէպոյի բանտները աշխատանքի էին հրա-
ւիրուած օգոստոսի 4-ին, առաւօտեան, երբ
հնչում է սուլիկի ձայնը։ Այն անձինք, որոնք
եկած չեն լինի աշխատանքի այդ օրը, կը հա-
մարվեն արձակուած եւ կիրակի, օգոստոսի
6-ին, գալով կայարանը, կարող են ստանալ ի-
րանց հաշիւը եւ անցագրերը։ Իսկ այն բա-
նտներին, որոնք աշխատանքից հրաժարվե-
լու հետ միասին՝ չեն գալ կիրակի օրը նաեւ
կայարան, հաշիւներն ու անցագրերը կուղարկ-
վեն օտարկանութեան միջոցով։

Մեզ խնդրում են յայտնել, թէ երկուշաբթի,
յուլիսի 31-ին, մի 12 փարեկան տղայ, առա-
ւօտեան տանից դուրս գալուց յետոյ, այլ եւս
չէ վերադարձել։ Տղայի հայրը՝ Պետրոս Դարա-
պետեան, խնդրում է այն անձանց, որոնք գի-
տեն նրա որդի Աղասու տղան, իմաց տան նը-
րան հետեւեալ հասցեով։—Անտօնովսկայա փ.,
№ 15։

Ներքին գործերի մինիստրութիւնը յանձնա-
րարել է բժշկական գեղարտամանութիւն քննելու
այն հարցը, թէ ինչ կախով եւ եղանակով վար-
ձատրութիւն պէտք է ստանան մասնաւոր բը-
ժիշկները՝ ազգաբնակչութեանը նրանց ցոյց տը-
ւած բժշկական օգնութեան համար։

ԱՐԴՈՒՆԻՆԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 23-ին,
Վրաստանի եւ Իմերէթի հայոց կոմսիտարիայից
ստացված հեռագրի համաձայն, Արդուինի գոր-
ծակալ հայր Շապիանց եկեղեցում, պատարագի
ժամանակ, յայտնելով Գրիգոր Զանչեանցի
անակնկալ մահը, — ծանօթացրել Արդուինի ան-
տեղեակ հայ հասարակութեանը հանգուցեալի
անձնատուրութիւնը թէ իբրեւ առաջնակարգ
հրապարակախօս եւ թէ մարդասիրական գզաց-
մունքների տէր մի անհատ, եւ յատկապէս չեղ-
տեց, թէ հանգուցեալի ջանքերով հաւաքված
գրասիրտով հարեւաւոր անտէր հայ որբեր են
խնամվում Հայաստանում։ Ապա պատարագի
վերջը, ջերմեանդ աղօթով երկուս խուռն
բազմութեան ներկայութեամբ, հանդիսաւոր
հոգեհանգիստ կատարվել Զանչեանի համար»։

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Թէլաւից վերա-
դառնալով գերասաններ Յարութիւնեան, Օհա-
նեան եւ տիկին Մէլքեան այստեղ տուեցին
կորոզ ներկայացում։ Խաղացին Պէպօ Սու-
րուկեանի եւ «Սիրահարը սեղանի տակը» վո-
լիլը։ Ներկայացումը խաղի կողմից անցաւ
աղիլը, բայց արագ, որ չաճախ ներկայացումները
ձանձրալի թուացին սեղանիցներին. մուտքն
անշնչաւ էր։ Ծնորակալութեան արժանի են
օրիորդներ Ն. Եսրեան, Ա. Գոճեան եւ Մ.
Տէր-Դաւթեան, որոնք մեր բազմաթիւ օրիորդ-
ներից այս անգամ առանց սովորական ճանաչ-
վել օգնեցին դերասաններին բեմ դուրս գալով։

ՄԵՂՂԻ գիւղից մեզ գրում են. «Յուլիսի
21-ին, Մեղրի գիւղի ամարանոցում երկու երի-
տասարդներ, Սրապիւս Բեախչեան եւ Մկրտիչ
Վաչեան գնում են օրսի, որի ժամանակ, ի
հայկէ, միմեանցից բաժանվում են։ Բեախչեան
որսի խիւղու ժամանակ անգիտակցաբար զեն-
դակը դնելու է Վաչեանի կրծքին եւ տեղն
ու տեղը սպանում նրան։ Բեախչեան վերա-
դառնում է տուն եւ վախից ոչինչ չէ յայտ-
նում։ Վաչեանի տանեցիներին հարցին նա պա-
տասխանում է, թէ հանապարհին Վաչեանը
բաժանվեց իրանից եւ գնաց անուխի։ Սպա-
սում են մէկ օր, երկրորդ օրը գիւղի երիտա-
սարդները սկսում են ման գալ Մկրտիչ ետեւ-

ւից եւ յանկարծ անտառումը գտնում են նրա
դիակը ընկած եւ հրապարակաւ կոտորւի։ Թաղումից
յետոյ Բեախչեանը խոստովանում է. թէ որսի
խիւղու ժամանակ զննակը անգիտութեամբ
դնել է»։

ԱՍԽԱՆԱԳԻՑ մեզ գրում են. «Յուլիսի
30-ին, Ասխաբադի աղօթատան մէջ, ու պա-
տարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց հան-
գուցեալ Գրիգոր Զանչեանի յիշատակին։ Աղ-
բիւրանց քահանան հոգեհանգիստ կատարելուց
յետոյ, քարոզ խօսել, բացատրելով հանգու-
ցեալի արած բարեգործութիւնները՝ անտուն
անտէր մնացած հազարաւոր հայ որբուկների
համար»։

ՆՈՒՆՈՒՑ մեզ գրում են. «Եղանակները մե-
ղանում շարունակ անձրեւային են. նոյնպէս
եւ շարունակում են իրանց վնասները Նուխու-
երկու հեղեղանքները՝ Կոճանն ու Դուրու-Չայը։
Անցեալ օրը խիստ քամուց յետոյ տեղաց մի
սարսափելի անձրեւ, որի հետեւանքն այն ե-
ղաւ, որ գետերը յորդացան եւ, չը հանդիպե-
լով իրանց եղբայրներից ցանկապատներին, ուղ-
ղեցին իրանց հոսանքները դէպի կանաչադարձ
այգիներն ու մարդկանց բնակարանները եւ
կրկին ամայութեան մատնեցին իրանց ափերը։
Վնասները ահագին են։ Ծառ են Կոճանի տուած
վնասները Նուխու մօտ գտնվող Դշաղ գիւ-
ղում։ Ժամանակ է ուշադրութիւն դարձնելու
այս հեղեղանքների վրա»։

ԲԱՆԱՆՑ գիւղից (Գանձակի գաւառ) մեզ
գրում են. «Մի քանի գրագէտ գիւղացիների
խնդրելով գիւղի հոգեւորականութիւնը կիրա-
ւի օր, յուլիսի 23-ին, պատարագից յետոյ հո-
գեհանգիստ կատարեց հանգուցեալ Գրիգոր
Զանչեանի համար՝ բազմաթիւ գիւղացիների
ներկայութեամբ։ Հոգեհանգիստից առաջ քահա-
նաներից մինը պատմեց ժողովրդին Զանչեանի
մասին ու առանձնապէս մատնանիշ արաւ նրա
գործունէութեան այն կողմերը, որոնք աւելի
գնահատելի ու հասկանալի են գիւղական ժո-
ղովրդի համար»։

ՇՆՈՂ գիւղից (Բորչալուի գաւառ) մեզ գրում
են. «Գիւղում սատակի տարածված են կարմուռ
եւ կապուտ հազ հիւանդութիւնները։ Հոնձը վեր-
ջացել է, բայց շարունակ տեղացող անձրեւնե-
րի պատճառով, այս տարի հայի պահատութիւն
պիտի լինի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Յուլիսի 26-ին Խնդիանապոլսում Բրայեանին
եւ Ստեփանոսին պաշտօնապէս յայտնեցին, որ
նրանք գեներալիական կուսակցութեան կող-
մից նշանակված են թիկնաւորներ Միայնա-
նահանգների նախագահի եւ փոխ-նախագահի
պաշտօնների համար։ Բրայեան նոյն ժողո-
վում դիմեց ներկայ գտնվող բազմաթիւ հասա-
րակութեանը մի ձառով, որի մէջ իմպերիալիզմը
կենտրոնական հարց յայտարարեց առաջիկայ
նախագահական ընտրութեան արցումների
ժամանակ։ Բրայեան ստաց, որ եթէ ինքը
ընտրվի հանրապետութեան նախագահ, կը հրա-
ւիրէ կոնգրէսը արտակարգ ժողովի եւ կառա-
չարիկ անյապաղ հրատարակել ամէրիկական
ժողովրդի վերջին առաջին՝ վարչական հաստա-
տուն ձեւ սահմանելու Ֆիլիպպին կղզիների
համար, երկրորդ՝ անկախութիւն տալու նրանց
եւ երրորդ՝ պաշտպանելու ֆիլիպպիններին
արտաքին օր եւ է միջամտութիւնից՝ մինչեւ
նրանք կարողանան կարգադրել իրանց վիճա-
կը։ Ապա Բրայեան յիշեցրեց, որ 1896 թուին
բոլոր կուսակցութիւնները ջերմ հետաքրքրու-
թիւն էին ցոյց տալիս դէպի կուրացիների
պաշտպանական գործը, այն ինչ այժմ, երբ
հարաւային Աֆրիկայում պատերազմ է մղվում,
որտեղ կուսում են միմեանց դէմ միապետական
եւ հանրապետական սկզբունքները, իմպերիա-
լիզմի պաշտպանները չեն համարձակվում ոչ
մի խօսք ասելու բռնիների օգտին։ Ծառախօսը
աւելացրեց, թէ բռնիների վերաբերմամբ նրա
ունեցած համակրութիւնը չէ ծագում որ եւ է
թշնամական զգացմունքից, որ նա տածելիս
լինէր դէպի Մեքսիկո-Բրիտանիան. ամէրիկացիները
թշնամաբար չեն վերաբերվում եւ ոչ մի ազգի
աշխարհին վրա։ Արձաթեալ դրամի հարցը, որի
բռնի պատուում էին անցաւ նախագահական
ընտրութիւնները, Բրայեան բոլորովին լուռ-
թեան տուեց։

—Կոմս Վալդերգէյէյն դաշնակից զօրքերի
գլխաւոր հրամանատար նշանակելը համակրա-
բով ընդունվեց թէ անգլիական եւ թէ մանա-
ւանդ աւստրական մամուլի կողմից։ «Köln,
Zeit.»-ի Լոնդոնի թղթակիցը պատկէ է ձեւա-
կերպում մամուլը կարծիքներն այդ մասին
համայնքների ժողովում եւ այլ քաղաքական
չրջաններում։ Ընթէ գլխաւոր հրամանատա-
րութիւնը չը յանձնվեց անգլիացի զենքերայի,

այդ զէպոյում Վալդերգէյէյն աւելի լաւ եւ գե-
րազատելի է, քան մի ուրիշը։ Վալդերգէյէյն նոր
պաշտօնի վերաբերեալ լուրը ամենքին ապ-
շիցեց Պարիզում։ Հանրապետական լուրջ լը-
րագիրները զսպում են իրանց ընդհանուր
շահը բարձր դասելով, քան ազգային մանր
փոռածութիւնը։ «Figaro»-ն, օրինակ, նկա-
տում է, թէ կարելի է միայն չորհրդարանի
դաշնակից զօրքերին, որ նրանց գլխաւոր հրա-
մանատար նշանակվեց Վալդերգէյէյն նման մի
անձնաւորութիւն, որ, իբրեւ զինուոր, վայե-
լում է այնպիսի մեծ եւ անվիճելի բարոյական
հեղինակութիւն։ Միայն մանր նայածալիստա-
կար մասուն է, որ ազմուկ է հանում եւ նա
էլ յարձակվում է ոչ այնքան Վալդերգէյէյն վրա,
որքան մինիստրութեան վրա, որ թոյլ է տուել
ֆրանսիական զօրաբաժինն ենթարկելու Գեր-
մանիայի զենքայի հրամանատարութեան։

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

3 օգոստոսի

ՇԱՆԳՀԱՅ, Հոգեւորիցի պատեղ եկած զօր-
քերը ցամաք չեն հանված, որովհետեւ փոխար-
քան հակառակում է այդ բանին Անգլիական
տակները վրդովված են։ Մէյուր հրահանգների
է պատահում իր կառավարութիւնը։
ԱՄՆԻՉ, Մինիստրների խորհրդում գրվեց
պատասխան, որ նպատակաւ է Ձինաստանում
գլխաւոր հրամանատարութիւնը գերմանացի
զենքերայի յանձնելու։

ՎԻԵՆԱ, Քննելով Սերբիայում վերջերս
տեղի ունեցած զէպոյերը, «Freundenblatt» ա-
սում է, թէ Աւստրո-Ունգարիան աշխատում է
միշտ խուսափել ռալկանեան պետութիւնների
ներքին գործերի մէջ խառնվելուց եւ այդ կող-
մից նման է Ռուսաստանին։ Չէ կարելի այժմ
ասել, թէ Աւստրո-Ունգարիան պարտութիւն է
կրել։ Սերբիայում գրութիւնը կոխված է ոչ
թէ սերբիական ներքին գործերից, այլ Սեր-
բիայի աշխարհագրական դիրքից եւ նրա ու
Աւստրո-Ունգարիայի անտեսական յարաբերու-
թիւններից։ Բալկանեան թերակղզում տեղի ու-
նեցող զէպոյերը քննելիս՝ ժամանակ է վերջա-
պէս գաղաւել ելման կէտ համարել Աւստրո-
Ունգարիայի եւ Ռուսաստանի շահերի հակա-
ռակութիւնը։

ԱՄՆԻՉ, Կանտոնի ֆրանսիական հիւպատոս
Գարդուէնցի ստացված հեռագրով (օգոստոսի
1-ից) հաղորդում է, թէ Կանտոնում հանգիստ
է։ Նա աշխատում է աջակցել փոխարքային եւ
վարչութեանը։ Այնուհետեւ հեռագրում ասված
է, թէ Սլավոնիայի չըջանում երկրապի բնա-
ւորութիւն է ստացիլ յուզմունքը միսլիմներնե-
րի եւ քրիստոնեաների դէմ։ Քրիստոնեաների
բնակութիւններից շատերը ենթարկվել են ա-
ւարառութեան եւ հրկիզման։

ՀՈՆԳՀՈՒԳ, Արեւմտեան գետից հաղորդում
են, թէ մի չինական բազմաթիւ զօրք, երեւի
«Սեւ զօրակները», առաջանում է գետնի վեր-
—Սլավոնիայի մօտ շարունակվում են խռովու-
թիւններ քրիստոնեաների դէմ։ «Մօխաւեկ»
կրէյսերը այժմ անտեղ է գտնվում օտարադ-
ղիներին պաշտպանելու համար։ Ֆրանսիական
թնդանթիւնը նաեւ Մէյուցից եկաւ այստեղ,
Կանտոնում շարունակվում է պատերազմական
սպառազինութիւնը։ Վաւապայի մօտ պատնէշ-
ների չինութեան պատերազմութիւնները վեր-
ջնալուծ վրա են։ Գետի երկարութեամբ ա-
կաններ են գրվում։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, Ծովապետ Բէյնէյ հեռագրում
է Տակուից, որ ինքը Մատաուից հեռագիր է
ստացել, որով Չաֆֆի հաղորդում է իր զօր-
քերի հանդիպած անշնչաւ դիմադրութեան մա-
սին։ Ծոքը սակայն այնքան սարսափելի է, որ
մեր զինուորներից շատերը հիւանդ պառկած
են։ Մատաու գտնվում է ինտերուից մի 12
մղոն հեռու. այդ կէտը Տեանձինք եւ Պեկինի
միջի ճանապարհի ամենալաւ մասն է։

ԼՈՆԴՈՆ, Հեռագիր Շանգհայից, օգոստոսի
1-ից, Պեկինից յուլիսի 25-ին ուղարկված եւ
այսօր այստեղ ստացված հաւաստի հեռագիրը
հաղորդում է, որ վերսկսվել են յարձակումնե-
րը գեպանութիւնների վրա։ Ռուստոնի մատա-
կարարութիւնը դադարել է։—Ծովապետ Բրիւս
հաղորդում է Տակուից, թէ ստացաւ բրիտա-
նական զենքերայի ինտերուից հետեւեալ հե-
ռագիրը յուլիսի 28-ից. «Դաշնակից զօրքերը
գտնվում են Պեկինից անգլիական 27 մղոն հեռու
եւ թշնամու կողմից թոյլ դիմադրութեան հան-
դիպեցին. թէպէտ թշնամին նախապատրաստել
էր պաշտպանողական կէտեր, բայց նա փախաւ
դաշնակից զօրքերի օտեաներուն պէս։ Բէյն-
գալեան ուղանքի երկու էսկադրոններ յար-
ձակում գործեցին թաթարական հեծեալազօրքի
վրա, շատ չինացիներ սպանվեցին, առնված են

մի քանի զօրակներ։ Դաշնակից զօրքերը սա-
տիկ ուժասպառ են եղած չոքից, բայց ընդ-
հանրապէս զօրքերի սանիտարական դրութիւ-
նը եւ արտադրութիւնը շատ լաւ է։ Լոնդոնի
չինական զեպոյերը հաղորդեց արտաքին գործե-
րի մինիստրութեանը մի հեռագիր, որի մէջ աս-
ված է, թէ գեպանները Պեկինում գետ երկու
օր առաջ ստոյգ էին։

ԲԵՐԼԻՆ, Գերմանական կրէյսերային նաւա-
տորմի երկրորդ ծովապետը հաղորդում է Տա-
կուից, յուլիսի 31-ից, թէ կապիտան Պօլ մա-
յիսի 27-ին 4 օֆիցերների եւ 107 զինուորների
հետ Տեանձինքի ճանապարհ ընկաւ Պեկին,
«Սեյրուտ» նաւի կապիտանը եւ առաջին օֆի-
ցերը յուլիսի 28-ին հետեւեցին նրան երկու
օֆիցերներով եւ 150 զինուորներով։ Պօլին,
հետեւեցին Տեկաուից 160 անտրիպցիներ։

ՏԵԱՆՁԻՆ, Տուանի զօրքերի հետ պատե-
րազմելուց յետոյ, որը անձամբ հրամանատա-
րութիւն էր անում, դաշնակիցները գրաւեցին
Խէտուի։ Չինացիներին նորից ամրացրած դիր-
քերում նստելու հնարաւորութիւն չը տալու հա-
մար, դաշնակիցների զօրքերը անյապաղ օկեցին
հալածել թշնամուն. դաշնակիցները, երեւի,
կը ժողնան Պեկինին 30 մղոն տարածութեան
վրա, որպէս զի արդեւին չինացիներին յետ
քաշվել դէպի Պատինֆու. հեծեալազօրքը գը-
նում է դէպի հարաւ։ Պրինց Տուան Պեկինում
մահվան պատժի է ենթարկում իւրաքանչիւրին,
ով միջքներ է հասցնում օտարազգիներին
կամ համակրութիւն է յայտնում թշնամի։

ՊԵՏԵՐԲՈՒԳ, Բուխարայի էմիրը նուրից
յօլուտ վերաւորված զինուորների 100,000
բուլի. այս գումարը Բարձրագոյն հանու-
թեամբ յանձնված է Կարմիր խաչի ընկերու-
թեան գլխաւոր վարչութեանը։

ԲԵՐԼԻՆ, Տօկիոյից, եպպօնական աղբիւրից,
հաղորդում են, թէ յուլիսի 31-ին, լուսարա-
ցին, եպպօնացիները առանց դիմադրութեան
հանդիպելու գրաւեցին Տուեյօու, որ գաւը-
նում է 10 մղոն Պեկինից հեռու. թշնամին,
բայտ երեւոյթին, գիւղերով նահանջել էր դէպի
Պեկին, առնված են զէնքի մեծ պաշարներ եւ
հայի ամբարներ։

ՆԻՒԻՐՈՒԿ, Մի հեռագիր, ուղարկված Ձի-
ֆուից օգոստոսի 1-ին, չինական հաստատ աղ-
բիւրից, հաղորդում է, թէ դաշնակից զօրքերը
երկուշաբթի մօտեցան Պեկինին։ Հիմք կայ
կարծելու, թէ զօրքը բռնի կերպով մուտք է
գործել Պեկին եւ գեպաններն ու նրանց բա-
րեկամները ազատված են այսօր նրանց, երեւի,
հիմա քրիստոնեայ զօրքի մէջ են Տեանձինքից
մինչեւ Պեկին երկաթուղու գիծը վերականգնե-
ված է. ուսմներն աշխատում են վերականգնել
մնացած բաժինը։

ԿՐԻԻԳԵՐՍԴՈՐՖ, Դէվէտ գտնվում է այժմ
վնասուած օրայի միւս կողմում եւ գնում է դէ-
պի հիւսիս Դէվաթէի հետ միասնաւոր համար
Դէվաթէ գտնվում է Ռուսներուրդում։ Կրիւն-
ներ եւ միւս գեներալները քալլ այլ քալլ հե-
տեւում են Դէվէտին։

ՇԱՆԳՀԱՅ, Այն կենդանիները մէջ, որոնք
բարձրված էին Շանգհայում Ձիֆու բրիտանա-
կան զօրքին ուղարկելու համար, ժանտախտ ե-
րկուց, ուսում եւ բեռնաւորումը դադարեցրած է։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, Այստեղ ստացված է տեղե-
կութիւն, թէ Ձինաստանը կը յանձնէ մի բար-
ձրաստիճան մանդարինի տեսակցութիւն ունե-
նալ դաշնակից զօրքերի հրամանատարների
հետ Տուեյօուում, որպէս զի միասին մի-
ջոյներ ձեռք առնվին գեպանների պաշտպա-
նութեան համար Պեկինից հեռաւորուց յետոյ
ճանապարհին։ Ասում են, թէ իշխան Ձինին է
յանձնված վարել այդ բանակցութիւնները։ Տե-
սակցութիւնը, երեւի, տեղի է ունեցել արդէն։

ՇԱՆԳՀԱՅ, Դաշնակից զօրքերը Պեկինում են
ՇԱՆԳՀԱՅ, Օգոստոսի 2-ին փոխարքան խնդ-
րեց բրիտանական կառավարութեանը յետ առնել
հնդկական զօրքերը ցամաք հանելու հրամանը
եւ թէպէտ փոխարքան ուղղակի բողոք չը ներ-
կայացրեց, բայց բրիտանական կառավարութիւ-
նը այնու ամենայնիւ հրամանագրեց յետաձգել
զօրքերի ափ հանելը մինչեւ որ նոր կարգա-
դրութիւն լինի այդ մասին։

ԳՈՒՐԲԱՆ, Բուլլէր գտնվում է Բարբերոսի
ճանապարհին։

ԼՈՐԷՆՑՈՒՄԲԱՐԿԵՉԷ, Օգոստոսի 1-ին հա-
սաւ ուսաց սանիտարական խումբը՝ բաղկա-
յած 35 հոգուց (մեծամասնութիւնը կանայք
են)։ Խումբը սակայն յետ է կանչված եւ ան-
յապաղ կուղեւորվի դէպի Ձինաստան։

բուժիչներն էլ զօրքեր կուղարկեն Բրիտանական հիւպատոսը սկսեց առարկութիւններ անել եւ սպառնաց, որ ափ հանելու պատրաստված զօրքերը այդ դէպքում յետ կը կանչվին Միաձայն ընդունված վճիռ համաձայն այստեղի հիւպատոսները ուղարկեցին իրանց կառավարութիւններին հետեւեալ հետազոտութիւնները զօրքերը հետազոտելու, Շանգհային մեծ վանդ կը սպառնայ: Այդ զօրքերը պէտք է ափ հանվին միջազգային համաձայնութեան հիման վրա: Շանգհայի պաշտպանութեան համար հարկաւոր է անյապաղ ափ իջեցնել աւելի բազմաթիւ զաշնակից զօրքեր: ՇԱՆԳՀԱՅ: Օգոստոսի 2-ին անգլիական զօրքերը ափ չէին հանված: Նրանք ուղարկվեցին Վէյ-ճաւ-Վէյ: Այդ որոշումը առաջացրեց իրր թէ սաստիկ վնասութիւն, երկուց են կրում, որ չինացիները չուտով կօգտվին այդ հանգամանքից:

4 օգոստոսի

ՇԱՆԳՀԱՅ: Օգոստոսի 2-ին: Սէյմուրին հրահանգ է տուած Շանգհայ ուղարկած զօրքերը ուղեւորել դէպի հիւսիս: Այդ ուղարկումը տեղի կունենայ, եթէ մինիստրութիւնը չը փոխէ իր վճիռը: Բրիտանական բանակիւնները եւ շոգենաւային ընկերութիւնները ուղարկեցին Սօլթերիին մի հետազոտ, որով յայտնուած են, թէ նրա կարգադրութիւնը կարող է ունենալ ճակատագրական հետեւանքներ: Նրանք հարկադրաբար խնդրում են լաւ կառավարող այդ հարցը: Օտարերկրեայ հիւպատոսները, որոնց նոյնպէս անհանգստացնում են այդ քայլի հետեւանքները, դիմեցին իրանց կառավարութիւններին նոյնանման յայտարարելով, խնդրելով համոզել բրիտանական կառավարութիւնը, որ նա կարգադրէ ցամաք հանել զօրքերը:

ՊԱՐԻՉ: Յուլիանոսիցուած ուսուցման եւ դաստիարակութեան խմբի սկզբնական դասաւանդման կարգում մրցանակաբաշխութիւն կատարելու ամենաբարձր պարգևներ են տուած Խ. Սինոզի ուսումնական խորհրդին, Պետերբուրգի Ազգայինական ընկերութեան, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան, տիկին Ալեքսանդրովնային, ֆինլանդական զբոսընթերցիչ վարչութեանը, Կովկասի ուսումնարանական չրանին, Պետերբուրգի զարոյցների յանձնաժողովին, Վեառային, Մոսկովայի գեւատվոններին, Նիժնի-Նովոգորոդի ուսումնական խորհրդին, գաւառական գեւատվոյին եւ քաղաքային վարչութեանը, Վեառային նախնայի տարրական զարոյցների դիրեկտորին եւ Բրեսնայի գեւատվոյին:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Լի-Մունդ-Չանգ խնդրում է ամերիկական արտաքին գործերի մինիստրութեանը համոզելու պետութիւններին, որ դաշնակից զօրքերը դադարեցնեն արշաւանքը դէպի Տոնկոն, որպէս զի մի բարձրատիման մանդարին կարողանայ տեսակցել այնտեղ ներանց հետ զինազարի հարցը քննելու համար: Լի-Մունդ-Չանգ առաջարկեց Շանգհայի ամերիկական հիւպատոսին յանձնել զեռպաններին դաշնակից զօրքերի ձեռքը Պեկինից դուրս, այց ամերիկական կառավարութիւնը մերժեց այդ առաջարկը եւ կրկնեց իր պահանջը, որ Չինաստանը զօրքէ դաշնակից զօրքերի հետ համաձայն եւ օգնէ Պեկին բաւականաչափ դաշնակից զօրքերի մտնելուն եւ զեռպաններին ու միւս քրիստոնեաներին այնտեղից հեռանալուն:

ԿՕԲԷ: Եւպոնիան զինազարդ է առաջարկում պետութիւններին եւ Չինաստանի մէջ: Չինաստանը ընդունել է առաջարկութիւնը: Պետութիւնները միտք ունեն պահանջելու, որ զեռպանները յանձնվին դաշնակից զօրքերին Պեկինի դռներին մօտ կամ որ թող տրվի դաշնակից զօրքերին մասնը Պեկին: Եւպոնիան սկսել է բանակցութիւններ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Լուրերին նայելով Միացեալ-Նահանգները պատրաստ են համաձայնելու զի-նազադարին: Պեկինում գտնվող զեռպաններին եւ ուրիշ օտարազգիներին ազատելու համար եւ որոշեալ ժամանակով զինուորական գործողութիւնները դադարեցնելու՝ խաղաղութեան պայմաններին մասին բանակցելու համար:

ՏԵԱՆԶԻՆ: Դաշնակից զօրքերը չնչին կորուստներով առան Չժեանձեական: չինացիները փախան մասամբ դէպի Պեկին, մասամբ դէպի Տոնկոն, թողնելով 500 պահվածներ:

ԼՕՆԴՈՆ: Գեղի գեկուցում է Մատուրից, յուլիսի 29-ից, հետեւեալը: Այսօր առաւօտեան հասանք այստեղ գիւնդային դժուար ձանապարհորդութիւնից յետոյ Բոլոր արգելի զօրքերը սաստիկ նեղվում են չղբից: Նիթագրում են, որ թշնամին ամրացել է Չժեանձեականի հիւսիսարեւմտում: Դեռպանները նոր տեղեկութիւններ չը կան:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱԶԱԿ ՄԵԼԻԻԲ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ, զերասան Անդրանիկին: Կարեւոր թղթերն անյապաղ ուղարկեցէք Ղուրա, պ. Աթանասեանին, ժամանակ է:
1—1 Բաքուրեան

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
Բ Ա Գ Ի Ո Ւ Մ

Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում օրիորդաց եւ տղայաց դիմապիայի, բէալական դպրոցի եւ այլ ուսումնարանների համար: Մանկական պարտէզի նպատակն է կրթել երեխաներին (4—7 տարեկ.) ֆրէզելեան սիստեմով: Ընդունվում են գիշերօթիկ եւ կիսագիշերօթիկ երեխաներ: Մանկական պարտէզի եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կարելի է ստանալ օգոստոսի 20-ից, Բաքուում:
2—8

Վիեննայում լոյս տեսաւ

«ՁԵՅԹՈՒՆՆ ԼՆՅԵԱԼԷՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԷՆ»

I մաս

Կիլիկիայի քարտէզով, Ձէյթունի յատակագծով, Ձէյթունի տեսարանով եւ զէյթունի կտրիճի պատկերով:

Գինը 1 ր. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 օ.

Դիմել Ռուսաստանից՝ Тифлисе. Центральная книжная торговля, іскі արտասահմանից՝ Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII, 3, Mechitharistengasse 4. (Տ. շ.) 6—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տարույս սեպտեմբերին լինելու է Ներսիսեան հոգեւոր դպրոցի համար հոգաբարձուներին ընտրութիւն, ուստի պատիւ ունեւ յայտնել թիֆլիսի բ. մասի պ.պ. ծխականներին, որ իւրաքանչիւր տան միմայն աւագագոյնը, որի տարիքը 25-ից պակաս չէ, եթէ մոռացմամբ անունը չէ գրել տուել իր ծիտաւէր քահանայի ցուցակում: Թող շտապէ գրել տալ մինչեւ օգոստոսի մէկը:

Գործակալ բ. մասի թիֆլիսի
6—6 (շ) Գրիգոր քահ. Մանդակունի

Այս տարւոյ մարտ ամսին Ալեքսանդր-ՇԱԿ ԶԱՅԻՊԱՊԵԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՏԸ եւ ահա չորս ամիսն է, որ նրա մասին ոչ մի տեղեկութիւն չը կայ: Նրա հայրը եւ եղբայրը արանով դիմում են ամեն տեղի հայերին՝ թափանձագին խնդրելով ու յայտնել է նրա մասին որ եւ է բան, կամ ով գիտէ նրա ընտելութեան տեղը նեղութիւն քաջէ հեռացրով կամ նաւակով յայտնել հետեւեալ հասցէով. Редакция «Мпакт», Арпапугу Мхитаряпцѣ. Ամեն ծախս կը ստացվի անմիջապէս:

Ցարութիւն Կարապետեան
(Կիւովօղակում)
(Տ. շ.) 4—6

Գ Պ Ր Ո Ց

տիկ. Կար. Հիւրեանցի

Երկու սեռի մանուկներ համար միատեղ պարագամունք իր հարազատ երեխաների հետ: Ընդունելութիւնը՝ սահմանափակված: Սեպտեմբերից բացվում է նաեւ պանսիօն: Դիմել՝ օգոստոսի 26-ից—Բերութեան փողոց (Նախկին Սաղօվայա), սեռի. տ. № 29) (Ն. շ.) 10—25

Ա լ Ք ք ա ն դ ր օ պ օ լ

ՍՏԵՓԱՆԱՆՏԻ ԳՐԱՎԱՅԱՌԱՆՑՈՒՄ
Վաճառվում են:

Պ. Կ. Կոստանանի բոլոր աշխատութիւնները. գրալածանքներին . . . զեղջ 20%
Տիկին տ. Կոստանանի բոլոր մանկական գրքերը . . . զեղջ 20%
Կրպէ, Պատկերներ կեանքից, 96 երես, գինը 20 կ. զեղջ 30%
Քերական կամ Արեւնարան, աղօթքների նոր յաւելումով, 42 երես, գինը 10 կոպ. զեղջ 50%
100-ից աւելի գնորդներ 100-ին կը վճարեն 3 ր. 50 կ.

Դիմել Ալեքսանդրօպօլ, քիցոքոքաւս
2—3 (շ.) Տեպանյու.



II ԿԵՐԳԻ ՄԵՍՆԵՐՈՐ ՌԵՍՈՒՄՆԵՐՆԵ

Ա. Դ Ե Ա Չ Կ Օ Վ Ս Կ Ա Յ Ե Ա Ի

ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ԴԱՐՆԵՐԱՑՔՈՎ

Կովկասեան ուսումնարանական չրանի պ. հոգաբարձուի թոյլտուութեամբ՝ այս տարւոյ սեպտեմբերին եւ բաց եւմ անում II կարգի մասնաւոր դպրոց աղջիկների համար եւ ուսումնարան՝ երկու սեռի երեխաներին պատրաստելու միջնակարգ դպրոցների ստորին դասարաններին համար՝ աղջիկների պանսիօնով: Յայտարարութիւններ մտնելու մասին ընդունվում են անհայն օր, առաւօտեան 8 ժամից մինչեւ 1-ը, ուսումնարանի շինութեան մէջ, որ գտնվում է Երեսմիտնիկայա փողոցում, բժիշկ Սամոյլովի տանը, № 154: (շ.) 1—5

ԱՐԴԱՆՈՒԶԻ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ
հարկաւոր են

ՈՒՍՈՒՑԻԶ Եւ ՈՒՍՈՒՑՈՒՆԻ

(Գերազանցի են ամուսններ): Պայմաններին համար դիմել՝ Михайловская, № 177, Կարապետ Ռուսականին: 8—10

ՀԱՅ ՌԵՍՈՒՑԻԶ

Ուզում է պաշտօն. աւանգում է հայոց լեզու եւ հայկական ձայնագրութիւն: Դիմել Աккерманъ. Учителю Арутюну Ордуняну. 2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ Ե ԸՆԿ

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ:

Եւ հակառակ՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլս: Մեկնում է Բաթումից չորեքշաբթի. 21-օգոստոսի ԱՆՏՈՒՅԻ չորեքշաբթի, նաւագետ Բիւնէյի եւ այսպէս չարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից լետով: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարներն տրոպու են Կովկասեան պակաս գններով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտաքիոպէի մէջ, չորեքշաբթի ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար: Ապրանքների եւ ծանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին՝ ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Անտոյն, Նաբէրէժնայա: ԹիֆլիսԻՄ—պ. Ս. Գ. Բարեկեղանեանին, Սիօնի փող. Խօջափարուսիօյի եւ Մայսուրաձէի քարակաւարան: ԲԱԹՈՒՄ—Եղր. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կարապիտիօյի, № 27: ՆՕՎՐՈՒՄ—ՍիՅԱՎ—Վաղրիկաւայի երկաթուղու առեւտրական գործակալութիւն: Ե. Տ. յ. 16—21

Ֆինանսների միևիտրի բոյուրեւանք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է ապր ունեղիւրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողներն ստանում են առեւտրատաների կուրսերում աւանդում են՝ 1) Առեւտրական թուարանութիւն եւ թուարանութիւն համրիլի վրա, 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային, 3) Առեւտրական թղթակցութիւն, 4) Առեւտրական անտեսագիտութիւն, 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ, 6) Գնեղադրութիւն եւ արաղապարութիւն (ուղղումն ձեռագրի):

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղր. Մովսիսեան եւ ընկ. ԲԱԳՈՒՄ Բաթումում: Կուրսերի կանոնադրութիւնը (УСТАВЪ) եւ մանրամասն ծրագիրը՝ տրվում եւ ուղարկվում են ձրիւրար: Օտարաբաղադայիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Տ. շ.) 12—25

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преподастѣ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая арифметика, 3) Коммерческая экономія, 4) Арифметика на счетахъ, 5) Торговья и вексельныя узаконенія и 6) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продаваемымъ во всѣхъ книжныхъ магазинахъ.

Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 10—20

Годъ занятій одиннадцатый.

За усѣбныя занятія благодарности.

Преподав. ведется по собств. сочиненіямъ.

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆԵՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց եւ պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են առեւտրատաների:

Աւանդելի առարկայքը սրանք են՝ 1) Առեւտրական Տեսութիւն, 2) Առեւտրական թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային), 4) Թուարանութիւն համրիլի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական եւ մուրհակային կանոնադրութիւն եւ 7) Գնեղադրութիւն, վաւածներ ուղղելու:

Աւանդել սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, եւ երեկոյան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսերի միւղղի բնակարանում, Սօլալկում, Ալեքսանդր Փրիլցիօյի տանը № 9, Սերգիեվսկայա եւ Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում: Մրադիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիւրար պէս եղր. Մովսիսեանների բանկային գրասենեակում եւ կուրսերի հիմնողի բնակարանում: Օտարաբաղադայիները դիմում են՝ Тифлисе, С. П. Мануэльянцу, (Տ. շ.) 13—25